Փուլ 2

COVID-19-ով պայմանավորված արտակարգ իրավիճակների վարձակալության օժանդակության ծրագիր բնակավայրերի համար

Արտակարգ իրավիճակների վարձակալության օժանդակության ծրագիրը (ERAP-C19) ցածր եկամտին համապատասխանող ընտանիքների անունից տանտերերին վարձավճարներ է տրամադրում՝ ամսական մինչև $750, երկու ամսվա համար՝ առավելագույնը $1,500 օժանդակություն:

Ո՞վ է իրավասու:

Այն վարձակալ բնակիչները, որոնց բնակավայրը պահպանելու և/կամ չվճարած վարձավճարները նվազեցնելու օժանդակություն է հարկավոր:

Որակավորվելու համար դիմորդները՝

1. Պետք է լինեն Գլենդելի բնակիչներ:

2. Պետք է օրինական վարձով տրվող բնակավայր վարձելիս լինեն (կամ սենյակի ենթավարձակալություն) և ունենան ուժի մեջ վարձակալության կամ ենթավարձակալության պայմանագիր: Հավելյալ տեղեկություն, ինչպիսին է՝ կոմունալների հաշիվները կամ որոշ փոստային ծառայությունները, ևս կպահանջվեն՝ հաստատելու համար, որ ընտանիքը բնակավայրը զբաղեցնող վարձակալ է:

3. Պետք է համապատասխանեն՝ որպես ցածր եկամուտ ունեցող ընտանիք (շրջանի միջին եկամտի 80% կամ ցածր): Ընտանիքի ընդհանուր եկամուտը չի կարող գերազանցել ստորև նշված առավելագույն սահմանաչափը՝ ըստ բնակավայրի ընտանիքի անդամների քանակի, որը հաստատված է HUD-ի կողմից: Յուրաքանչյուր դիմորդից կպահանջվի ներկայացնել եկամտի համապատասխանությունը հաստատող փաստաթղթեր:

Եկամտի առավելագույն սահմանաչափը	1 անձ	2 անձ	3 անձ	4 անձ	5 անձ	6 անձ	7 անձ	8 անձ
Շրջանի միջին եկամտի 80%	$ 63,100	$ 72,100	$ 81,100	$ 90,100	$ 97,350	$ 104,550	$ 111,750	$ 118,950

4. Պետք է տնտեսապես COVID-19 համավարակի հետևանքով տուժած լինեն: Տուժելը կարող է ներառել հետևյալ կետերից որևէ մեկը.
   - Եկամտի կորուստ՝ COVID-19-ի հետևանքով վճարովի աշխատանքից ժամերի կրճատման պատճառով (օրինակ՝ աշխատանքից ազատում, աշխատաժամերի կորուստ, եկամտի նվազեցում և այլն):
   - Եկամտի կորուստ COVID-19-ով հիվանդ լինելու պատճառով կամ COVID-19-ով հիվանդացած բնակավայրի/ընտանիքի անդամին խնամելու պատճառով:
   - COVID-19-ի հետևանքով հավելյալ ծախսեր (օրինակ՝ դպրոցի փակման պատճառով երեխաների խնամք, բժշկական ծախսեր կամ կառավարության հրամաններին համապատասխանելու պատճառով ծախսեր և այլն):
   - Եկամտի կորուստ՝ կառավարության կողմից արտակարգ իրավիճակների ժամանակ տանը մնալու առողջապահական հրամանի, ինքնամեկուսացման կամ այլ անձանց հետ հավաքվել խուսափելու վերաբերյալ հրամանների պատճառով:
   - Եկամտի կորուստ՝ COVID-19-ով պայմանավորված արտակարգ իրավիճակներին վերաբերող այլ գործոնների պատճառով:

5. Պետք է արտակարգ իրավիճակները մեղմացնող նույն նպատակով օգնություն արդեն ստացած չլինեն՝ տեղային, նահանգային կամ դաշնային գործակալություններից (IRS-ի կողմից տրված դաշնային խթանման չեկերը (Stimulus Check) այս կանոնում բացառություն են):

6. Պետք է վարձակալվող բնակավայրի տիրոջ/տանտիրոջ հետ ընտանեկան հարաբերություն չունենան:

7. Պետք է ներառված չլինեն «Section 8» ծրագրում, ներկայումս ապրելիս չլինեն քաղաքապետարանի կողմից հովանավորվող մատչելի բնակավայրում կամ գրանցված որևէ այլ բնակավայրային օժանդակության ծրագրում:
8. Համաձայն դաշնային կանոնակարգի՝ օժանդակության համար դիմող դիմորդները պետք է ունենան օրինական կացության կարգավիճակ, որպեսզի որակավորվեն:

Ինչպե՞ս դիմել

2-րդ փուլի դիմումները կընդունվեն միայն առցանց՝ սկսած 2021թ. հունվարի 11-ից (կեսօրվա ժամը 12:00-ից՝ Խաղաղօվկիանոսյան ժամանակով) մինչև 2021թ. հունվարի 22-ը (կեսօրվա ժամը 12:00՝ Խաղաղօվկիանոսյան ժամանակով):
ERAP-C19 ծրագրի մասին տեղեկությունները և դիմումաձևը կարող եք գտնել հետևյալ հասցեով՝

https://www.glendaleca.gov/government/departments/community-development/housing/erap

Յուրաքանչյուր տնային տնտեսության համար կարող է ներկայացվել միայն մեկ դիմում: Կրկնակի դիմումները կորակազրկեն դիմորդ(ներ)ին:

Նրանք, ովքեր 1-ին փուլից ֆինանսավորում են ստացել, իրավունք չունեն դիմելու և ստանալու 2-րդ փուլի ֆինանսավորում:

Նրանք, ովքեր դիմել են 1-ին փուլում ֆինանսավորման համար և չեն ընտրվել, պետք է կրկին դիմեն և ներկայացնեն 2-րդ փուլի ֆինանսավորման նոր հայտ: Նրանք, ովքեր հայտեր են ներկայացրել 1-ին փուլում, կարող են դիմել 2-րդ փուլին՝ օգտագործելով նույն Սպասման ցուցակի ստուգման հաշիվը / WaitList Check Account, որը ստեղծել էին 1-ին փուլի համար:

Հարցե՞ր

Խնդրում ենք հարցերն ուղարկել էլեկտրոնային փոստով՝ ERAPCOVID19@Glendaleca.gov հասցեին կամ զանգահարել՝ (818) 548-2069: